ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Աբովյան համայնքի կարիքների համար փողոցների, բակերի ասֆալտապատման և փոսալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

19/03/2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Չոբանյան/ԳԱՊ
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան/ԳԱ, Լ. Շառաջյան/ԳԱ, Գ. Խաչատրյան, Տ. Սարոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Մկրտչյան/ԳՊ/ՄՀմ

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի վերագնահատման մասին
(Ա. Չոբանյան)

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2021 թվականի մարտի 04-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Ա. Չոբանյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Անվանումը
1	«Բագարանի բարիք» ՓԲԸ
2	«Վահրամ Կնյազյան» ԱՁ
3	«ԳԱԲՈԱՐՏ» ՍՊԸ
4	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
5	«ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ
6	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական

	փորձաքննություն» ՓԲԸ
7	«Հուսալի Կամար» ՍՊԸ
8	«ՄԱՌՔ» ՍՊԸ
9	«Նորայր և ընկերներ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Չոբանյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
Չափաբաժին 1՝ «Աբովյան համայնքի կարիքների համար փողոցների, բակերի ասֆալտապատման և փոսալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»					
1	«ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ	449 000	-	449 000	1 220 000
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	665 000	133 000	798 000	
3	«ԳԱԲՈԱՐՏ» ՍՊԸ	790 000	-	790 000	
4	«Հուսալի Կամար» ՍՊԸ	800 000	-	800 000	
5	«Վահրամ Կնյազյան» ԱՁ	813 000	-	813 000	
6	«ՄԱՌՔ» ՍՊԸ	974 000	-	974 000	
7	«Բագարանի բարիք» ՓԲԸ	998 000	-	998 000	
8	«Նորայր և ընկերներ» ՍՊԸ	1 100 000	-	1 100 000	
9	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	1 200 000	-	1 200 000	

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
(Ա. Չոբանյան)

4.1 «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «ԳԱԲՈԱՐՏ» ՍՊԸ-ի, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի, «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ի, «ՄԱՌՔ» ՍՊԸ-ի, «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի, «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
4.2 «ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հավելված 3-ի, որում բացակայում է ներգրաված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր և այլն) պատճենները: Նաև ներկայացված հայտը ստորագրված չէ սույն հայտը էլեկտրոնային ստորագրելու իրավասություն ունեցող անձի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի որոշեց՝ «ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ համաձայն հրավերի 2.4 կետի: Բացակայող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կգնահատվի նաև մասնակցի ոչ գնային պայմանների չափանիշները՝ հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվի զրո և չի հանդիսանա հայտի մերժման հիմք:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ա. Չոբանյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 22.03.2021 թվականին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Չոբանյան
Անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Լ. Շառաջյան

		Գ. Խաչատրյան
		Տ. Սարոյան
Համակարգող		Հ. Մկրտչյան